

Թագաւոր մը, ինչպէս է Մոնագոյի իշխանը, պարծանք կը համարի տիրել 3000 հպատակաց վրայ, և ունենալ 1500

հեկտար Թագաւորութիւն, որ Բարիզ քաղաքին հինգերորդ մասն ըսել է:

ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՏԱՌՆԵՐՆ

Անգղիերէն օրագիր մը (Journal of the Society of Arts) հետեւեալ տեղեկութիւնները կու տայ անտառաց վրայ, որ կը ծածկեն Եւրոպայի մակերևոյթը: Կարճիի փայտը հետզհետէ պակսելու վրայ է, թէ և Շուեդի կէսը, Նորուեկիոյ քառորդը, Զուիցերիի վեցերորդ մասը, և Ռուսիա 780000 քառակուսի մղոնէն աւելի երկիր ծածկուած ըլլայ կարճիի անտառներով:

Վերջին յիսուն տարիներուն մէջ կարճիի փայտին սպառումը Գաղղիա կրկնապատկուեր է: Հիմա տարուէ տարի Գաղղիա կը գործածուի 15,000000 խորանարդ ոտը կարճիի փայտ՝ զինիի տակառաց համար, 750000 խորանարդ ոտը՝ շինութեանց համար, 600000 խորանարդ ոտը՝ նաւատորմին համար, և 150000 խորանարդ ոտը՝ երկաթուղիներու կառաց համար:

Յամին 1826, Գաղղիա դրսէն կը մտնէր 20,000000 Փռանդի կարճիի փայտ, հիմա կը մտնէ 125,000000 Փռանդի, առանց հաշուելու Գաղղիոյ անտառներն, որոնք 612720 հեկտար տարածութիւն ունին:

Ռուսիոյ անտառները 190,074159 հեկտար տարածութիւն ունին. Շուեդի և Նորուեկիոյ անտառները 30,509600 հեկտար. Աւստրոյ-Հոլանդարական կայսերութեան անտառները՝ 14,721717 հեկտար. Գերմանիոյ կայսերութեան անտառները 14,254262 հեկտար. Ռումանիոյ անտառները՝ 8,000000 հեկտար. Իտալիոյ անտառները՝ 5,025893 հեկտար. Սլաւոնիոյ անտառները՝ 4,747059 հեկտար. Զուիցերիի անտառները՝ 786900 հեկտար. Բորդուգալի անտառ-

ները՝ 561000 հեկտար. Պելճիոյ անտառները՝ 434896 հեկտար. և Յունաստանի անտառները՝ 860770 հեկտար:

Այս թուոց վրայ յաւելլով Գաղղիոյ անտառաց տարածութիւնը, կ'ելլէ ընդ ամենն 270,488976 հեկտար տարածութիւն Եւրոպայի անտառաց:

Աւստրոյ-Հոլանդարական գաւառաց անտառներուն տարածութեանը վրայ գաղափար մը առնելու համար՝ բաւական է գիտնալ որ յամին 1865 դուրս զրկուեր է 1,900000 խորանարդ մէդր փայտ, որ արժեք է 25,000000 Փռանդ: Գերմանիոյ կայսերութենէն տարուէ տարի դուրս զրկուած փայտին զինն է 268,838400 մարկ, որ է ըսել իբր 331 միլիոն Փռանդ:

Հայիւ եղած է որ Գաղղիա 20,000000 խորանարդ մէդր փայտ կու տայ տարին, ասոր 18 միլիոնը վառելի փայտ է. և 55,000000 խորանարդ մէդր փայտ կը սպառէ, որուն 45 միլիոնը վառելի փայտ է. ուրեմն տարուէ տարի պէտք է լեցունէ զրոնէն պակասը 35 միլիոն խորանարդ մէդր: Յամին 1855, այս պակասն արժեք էր 70 միլիոն Փռանդ, տասը տարի ետքն յամին 1865, արժեք 157 միլիոն Փռանդ: Սակայն այս վերջին գումարէն հանելու է 31 միլիոն Փռանդն, որ դուրս զրկուած փայտին զինն է: Եւրոպայի Ռուսիոյ անտառները տարին կու տան 160 միլիոն ուռալիի փայտ, որ է ըսել 640,000000 Փռ:

Ֆինլանտիա եղևինի ճոխ անտառներ կան, այնպէս որ Ուէստգրէ գաւառին անտառները 6,776719 զոննէլլանտ (tonnellands) տարածութիւն ունին, այսինքն է 7454,390000 քառակուսի մէդր:

էթէ խնամքով կտրուելու ըլլան, միայն այս անտառները տարին կրնան տալ 3,310000 խորանարդ ոտք փայտ:

Վիպորկի գաւառին մէջ միայն արքունի անտառը կը ծածկէ 127109 դոնէկըսնտ տարածութիւն, որ է ըսել 1 միլիոն 900 քառակուսի աշխարհահազրական միլոն:

Սակայն այս ընդարձակ մակերևութին մշակութիւնը կանոնաւորապէս չկատարուիր. այս բանիս համար և փոխադրութեան դժուարութեանցն համար, տարեկան եկամուտն հազիւ թէ կը հասնի 1,700000 ֆռանգ:

Իտալիոյ անտառներն հետեւեալ կերպով բաշխուած են.

Բիեմոնդ և Լիգուրիա	638346 հեկտ.
Լոմպարտիա և Վենետիկ	846749 »
Մոտենա	57186 »
Բարմա	153053 »
Գոսպանա	634355 »
Հին Վիճակը Եկեղեցւոյ	427272 »
Նաբոլի	1,097927 »
Սիկիլիա	125513 »
Սարդենիա	1,045022 »

որով կ'ըլլան ընդ ամենը 5,025892 հեկտար: Իտալիա կը գտնուի նաև ալտոր (սոմադ) և մանանայի ծառ, մանաւանդ Կալաբրիոյ և Սիկիլիոյ մէջ:

Ալճերի ալ ունի 1,440000 հեկտար տարածութեամբ անտառ:

Այս վիճակագրական տեղեկութիւններէն կը տեսնուի որ անտառները մեծ ընդարձակութեամբ ջնջուելու վրայ են Եւրոպայի մէջ: Յայտնի է ամենուն անտառահատութեան ձախողակ հետեւանքը, վասն զի անտառը և մայրիք անհրաժեշտ կարևոր են ամպերու կազմութեանն ու անձրևաց առատութեան, առանց որոց ամենայն բուսաբերութիւն և ամենայն մշակութիւն անկարելի կ'ըլլան: Արդէն շատ անտառներ եղծուելով Եւրոպայի մէջ, անձրևաց կարգը փոխուել է, և այս փոփոխութիւնն երթալով աւելի ֆրասաբեր պիտի ըլլայ թէ որ դարման չտարուի անտառաց պահպանութեանն, որոնք յօգուտ մարդկութեան տնկուել են բնութեան ձեռքը, և մարդս անդադար զանոնք եղծանելու հետ է:

ԿԼԻՄԱՅԻ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ԲՈՒՍԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Կլիմայ կ'ըսուի բնական պայմանաց այն շարայարութիւնն որ կը ներգործեն կենդանեաց և բուսոց զգայարանացն ու գործարանացը վրայ, և պատճառ ենին բարեխառնութիւնը, լոյսը, և մէտէորական ամեն երևութից բովանդակութիւնն, որ մեր մթնոլորտին մէջ տեղի կ'ունենան, ինչպէս է անձրև, ձիւն, կարկուտ, մեղ, հողմ, խոնաւութիւն, և ելեկտրականութիւն:

Ամեն գաւառ որ քիչ մը ընդարձակ ըլլայ գրեթէ իր յատուկ կլիմայն ունի. տարբերելով տեղէ տեղ ըստ զանազանութեանն այլևայլ աստիճանաց սաստկութեան, որով վերոյիշեալ երևոյթները

կը յայտնուին: Տեղոյ մը կլիմային մասնաւորութիւնն տուող այլևայլ պատճառաց գլխաւորները կը համարուին աշխարհագրական լոյնութիւնը, արեգդիմութիւնը, ջրոյ մեծամեծ կոյտերու մերձակորութիւնը, երկրին բուսաբերութիւնը կամ անբուսութիւնը:

Այս տեղ մեր վախճանը քննել չէ թէ ինչպէս այն պատճառները կը ներգործեն կլիմայից վրայ և կը փոփոխեն զանոնք, այլ տեսնել թէ ինչպէս կ'ազդեն այլևայլ աստիճանի ջերմութիւնը, խոնաւութիւնը և լոյսը բուսոց կենդանութեանը վրայ:

Ջերմոքիւն. — Բարեխառնութիւնն